

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լիտվայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, ձգտելով պահպանել և ամրապնդել իրենց միջև գոյություն ունեցող միասնության ու համագործակցության ոգին, անօրինական միգրացիայի դեմ միջոցներ ձեռնարկելու վճռականությամբ, ելնելով համագործակցության մղումից և փոխադարձության հիմքերից՝ դրույրացնել առանց թույլտվության ապրող անձանց հետընդունումը, նպատակ ունենալով ապահովել վերադարձի ենթակա անձանց՝ միջազգային պայմանագրերով և ներքին օրենսդրությամբ երաշխավորված հիմնական իրավունքներն ու ազատությունները և, հատկապես, դատական և իրավասու մարմիններին դիմելու իրավունքը, ղեկավարվելով հետընդունման ենթակա անձանց գործերը անհատական կարգով քննելու սկզբունքով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրում օգտագործված տերմինները

Սույն Համաձայնագրում ներքոհիշյալ տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

«հարցնող Պայմանավորվող կողմ» նշանակում է՝ Պայմանավորվող կողմերից մեկը, որը դիմում է մյուս Պայմանավորվող կողմին՝ իր տարածքում առանց թույլտվության գտնվող անձի հետընդունման կամ հետընդունումը տարանցիկ գործողությունների հետ կապելու հարցով,

«հարցվող Պայմանավորվող կողմ» նշանակում է՝ Պայմանավորվող կողմերից մեկը, որը հարցնող Պայմանավորվող կողմից ստանում է հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում առանց թույլտվության բնակվող անձի հետընդունման վերաբերյալ կամ հետընդունումը տարանցիկ գործողությունների հետ կապող հարցում,

«առանց թույլտվության բնակվող անձ» - սեփական քաղաքացիներ և օտարերկրացիներ, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Պայմանավորվող կողմերից մեկի տարածք մուտք գործելու կամ բնակվելու օրինական պահանջները,

«օտարերկրացիներ» - յուրաքանչյուր անձ, որը չի հանդիսանում Պայմանավորվող կողմերի պետություններից որևէ մեկի քաղաքացի:

Հոդված 2

Սեփական քաղաքացիների հետընդունումը

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, մյուս կողմի հարցումով, պարտավորվում է ոչ այլ, քան սույն Համաձայնագրում նշված ձևականությունների, հետ ընդունել առանց թույլտվության բնակվող անձին այն դեպքում, երբ հաստատված է կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նա հարցվող Պայմանավորվող կողմի քաղաքացի է:

2. Հարցնող Պայմանավորվող կողմի դիմումը ստանալուն պես հարցվող Պայմանավորվող կողմը պարտավորվում է հետընդունման ենթակա անձանց, առանց հապաղելու, ապահովել հայրենադարձման համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերով:
3. Հարցնող Պայմանավորվող կողմը պարտավորվում է նույն պայմաններով հետընդունել նման անձին իր սեփական տարածք, եթե հետագա ստուգումները բացահայտեն, որ հարցնող Պայմանավորվող կողմի տարածքից մեկնելու պահին նա իրականում հարցվող Պայմանավորվող կողմի քաղաքացին չէ:

Հոդված 3

Քաղաքացիության ապացուցումը կամ ընդունումը

1. Քաղաքացիությունը կարող է ապացուցվել, եթե ներկայացվում է վավեր անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ, տրված հարցվող Պայմանավորվող կողմի լիազորված մարմինների կողմից, իրենց քաղաքացիներին, եթե այս փաստաթղթերը կարող են պարզապես վերագրվել դրանք ունեցողներին: Եթե այդ փաստաթղթերը ներկայացվեն, հարցվող Պայմանավորվող կողմը կճանաչի անձի քաղաքացիությունը, և լրացուցիչ քննության կարիք չի առաջանա:
2. Քաղաքացիության մասին հիմնավոր ենթադրություն անելու համար հիմք կարող են ծառայել.

ա) սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած փաստաթուղթ, որի վավերականության ժամկետն անցել է,

բ) անձին վերաբերող գրավոր վկայություն,

գ) երրորդ անձի կողմից գրավոր հաստատում,

դ) այլ փաստեր, որոնք կոնկրետ դեպքերում հաստատել է հարցվող Պայմանավորվող կողմը:

Քաղաքացիությունը կարող է հաստատվել վերոհիշյալ ապացույցի հիման վրա, որը նախատեսում է դրա հաստատումը հարցվող Կողմից:

3. Եթե քաղաքացիությունը չի ապացուցվում, և քաղաքացիության կանխավարկածը փաստերի և հայթայթած փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ հաստատել, անձի քաղաքացիությունը որոշելու համար անցկացվող հարցաքննման ժամանակ յուրաքանչյուր Կողմ կարող է անձի հետ հարցազրույց անցկացնելու համար նշանակել արտերկրում իր դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ներկայացուցչի կամ փորձագետի:

Հոդված 4

Օտարերկրացիների հետընդունումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով, պարտավորվում է առանց ոչ այլ, քան սույն Համաձայնագրում նշված ձևականությունների, հետընդունել սեփական տարածք օտարերկրացուն, որն ունի իր Կողմի տարածքում բնակվելու իրավունք տվող որևէ օրինական վավերական կարգավիճակ:

2. Այն դեպքում, երբ ընդունվում է օտարերկրացու վերաբերյալ հարցում, հարցնող Պայմանավորվող կողմը օտարերկրացուն պետք է տրամադրի ստանդարտ ճամփորդական փաստաթուղթ:

Ստանդարտ ճամփորդական փաստաթղթի նմուշ-օրինակը պետք է դիվանագիտական ուղիներով համաձայնեցված լինի Պայմանավորվող կողմերի միջև:

3. Սակայն հարցնող Պայմանավորվող կողմը հետագայում հետ կընդունի սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված որևէ օտարերկրացու, եթե ապացուցվի, որ վերջինս հարցնող Պայմանավորվող կողմի տարածքից մեկնելու պահին

իրականում չի ունեցել հարցվող Պայմանավորվող կողմից տրված օրինական բնակության իրավունք:

4. Առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման պարտադրականությունը, ինչպես նախատեսվում է սույն հոդվածում, չպետք է կիրառվի երրորդ երկրների քաղաքացիների նկատմամբ, որոնք հարցնող Պայմանավորվող կողմի հետ ունեն ընդհանուր սահմաններ:

Հոդված 5 Ժամկետներ

1. Հարցվող Պայմանավորվող կողմը պետք է հետընդունման դիմումին արձագանքի առանց հապաղելու և առավելագույնը նման դիմում ստանալուց երեսուն օրվա ընթացքում:
2. Հարցվող Պայմանավորվող կողմը պետք է առանց ձգձգման, առավելագույնը երեսուն օրվա ընթացքում, ստանձնի այն անձի գործը, որի հետընդունման մասին համաձայնություն է կայացվել: Հարցնող Պայմանավորվող կողմի ցանկությամբ այս ժամկետը կարող է, ըստ անհրաժեշտության, երկարաձգվել՝ օրինական պահանջները կատարելու կամ գործնական դժվարությունները հաղթահարելու համար: Կողմերի լիազորված մարմինները պետք է նախապես գրավոր համաձայնության գան տեղափոխման վերջնական օրվա մասին:
3. Եթե ապացուցվի, որ օտարերկրացին, Պայմանավորվող կողմի իմացությամբ, վեց ամսից ավել անընդմեջ բնակվել է նրա տարածքում, ապա տվյալ Կողմը այլևս չի կարող դիմել հետընդունման համար: Այնպիսի բացառիկ պատճառներով, ինչպիսիք են լուրջ առողջական հիմնախնդիրները, օրինական պահանջները կամ կարևոր գործնական դժվարությունները, այս ժամկետը կարող է երկարաձգվել մինչև տասներկու ամիս:

Հոդված 6 Տարանցում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով, պետք է թույլ տա օտարերկրացիների տարանցումը (այսուհետ՝ տարանցում), որը կատարվում է լիազորված իշխանությունների վերահսկողության ներքո՝ այն պայմանով, որ ընդունումը այլ տարանցիկ երկրներ կամ նպատակակետ երկիր երաշխավորված է:
2. Օտարերկրացիների տարանցումը կարող է մերժվել, եթե բավարար հիմքեր լինեն ենթադրելու, որ նպատակակետ կամ որևէ այլ տարանցիկ երկրում անձին սպառնում են անմարդկային վերաբերմունք կամ մահապատիժ, նրա ֆիզիկական գոյությունը կամ ազատությունը վտանգված են՝ ելնելով նրա ազգությունից, կրոնական կամ ռասայական պատկանելությունից, ինչպես նաև քաղաքական համոզմունքներից:
3. Տարանցումը կարող է մերժվել նաև, եթե ենթադրվում է, որ անձը կարող է հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում, տարանցիկ երկրում կամ նպատակակետ երկրում ենթարկվել քրեական հետապնդման կամ դատավճռի իրականացման:
4. Տարանցման մասին դիմումը և դրա պատասխանը պետք է ներկայացվեն գրավոր՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հարցվող Պայմանավորվող կողմը ընդունում է դիմումը, ապա տարանցումը պետք է կատարվի երեսուն օրվա ընթացքում:
5. Տարանցման դեպքում միասին կարող են տեղափոխվել առավելագույնը քսան անձինք:
6. Եթե նույնիսկ հարցնող Պայմանավորվող կողմին տրվել է նախնական պատասխան, տարանցման նպատակով ընդունված յուրաքանչյուր անձ կարող է հետ վերադարձվել, եթե հետագայում պարզվի, որ սույն հոդվածի 1-3-րդ կետերում

նկարագրված պայմանները չեն բավարարվել: Այս դեպքում հարցնող Պայմանավորվող կողմը պարտավոր է հետ ընդունել տվյալ անձին:

Հոդված 7 **Տվյալների փոխանակումը և պահպանումը**

1. Եթե սույն Համաձայնագրի իրագործման համար հաղորդվում են անձնական տվյալներ (այսուհետ՝ տվյալներ), ապա դրանք պետք է հավաքվեն, օգտագործվեն և պահպանվեն՝ համաձայն տվյալ երկրի օրենսդրության և միջազգային իրավունքի: Մասնավորապես, պետք է գործեն հետևյալ սկզբունքները.

ա) ստացող Պայմանավորվող կողմը պետք է օգտագործի այդ տվյալները միայն սույն Համաձայնագրում նշված նպատակի համար և հաղորդող Կողմի սահմանած պայմաններով,

բ) հաղորդող Պայմանավորվող կողմի պահանջի դեպքում ստացող Պայմանավորվող կողմը պետք է տեղեկացնի նրան, թե ինչպես է օգտագործելու այդ տվյալները,

գ) տվյալները կարող են հաղորդվել և օգտագործվել միայն լիազորված մարմինների կողմից, որոնք պատասխանատու են սույն Համաձայնագրի իրականացման համար: Այդ տվյալները այլ մարմինների կարող են հաղորդվել միայն հաղորդող Պայմանավորվող կողմի գրավոր համաձայնության դեպքում,

դ) տվյալներ հաղորդող Պայմանավորվող կողմը պարտավոր է հիմնավորել դրանց ճշտությունը, անհրաժեշտությունը և հավաստիանալ, որ չեն տրամադրում կոնկրետ նպատակային պահանջները գերազանցող տվյալներ: Հաղորդող Պայմանավորվող կողմը պետք է հետևի իր երկրի օրենքով նախատեսված՝ տվյալների հաղորդմանը վերաբերող բոլոր սահմանափակումներին: Եթե տվյալները ճշգրիտ չեն կամ հաղորդվել են անօրինական ճանապարհով, ստացող Պայմանավորվող կողմը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին և պետք է ճշտի կամ ոչնչացնի այդ տվյալները,

ե) անձի պահանջով՝ նրան պարտավոր են տեղեկացնել իր մասին հաղորդվող ցանկացած տվյալի, ինչպես նաև տվյալների հաղորդման նպատակի մասին՝ համաձայն այն երկրի օրենքի, որից տեղեկություն է հարցվում,

զ) հաղորդվող տվյալները պետք է պահպանվեն սոսկ այնքան ժամանակ, քանի դեռ ծառայում են այն նպատակին, որի համար հաղորդել են,

է) Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է պաշտպանել ստացված տվյալները չթույլատրված օգտագործումից, փոփոխումից և հրապարակումից:

2. Անձանց հետընդունման նպատակով հաղորդվող տվյալները կարող են ներառել միայն հետևյալը.

ա) տվյալներ փոխադրման ենթակա անձի մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև անձի ընտանիքի մասին (անուն, ազգանուն, նախկին անուն, ծածկանուն կամ կեղծանուն, այլ անուն, ծննդյան թիվը և վայրը, սեռը, ներկա և նախկին քաղաքացիությունը, հայտնի վերջին հասցեն և այլն),

բ) անձը հաստատող փաստաթուղթ, անձնագիր, անձը հաստատող այլ փաստաթուղթ և ճամփորդական փաստաթուղթ (համարը, վավերականության ժամկետը, տալու ամսաթիվը, ում կողմից է տրված, տալու վայրը և այլն),

գ) այլ մանրամասներ, ինչպիսիք են լուսանկարները, որոնք անհրաժեշտ են փոխադրման ենթակա անձի ինքնությունը հաստատելու համար կամ ստուգելու՝ արդյոք բավարարվել են սույն Համաձայնագրով նախատեսված հետընդունման պայմանները,

դ) կանգառի վայրերը և երթուղիները,

ե) ցանկացած համապատասխան տեղեկություն, որն ապացուցում է, որ անձը Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ապրել է առանց թույլտվության,

զ) ցանկացած համապատասխան տեղեկություն անձի առողջական վիճակի մասին,

է) տեղեկություններ տեղափոխվող անձին ուղեկցելու անհրաժեշտության և ուղեկցող պաշտոնյաների մասին:

Հոդված 8 Ծախսեր

1. Հարցնող Պայմանավորվող կողմը հոգում է մինչև հարցվող Պայմանավորվող կողմի կամ նպատակակետ երկրի սահմանը հետընդունելու կամ տարանցելու, ինչպես նաև սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 3-րդ կետում և 6-րդ հոդվածի 6-րդ կետում նշված անձանց՝ հարցվող Պայմանավորվող կողմի տարածքից վերադարձնելու հետ կապված բոլոր տրանսպորտային ծախսերը:
2. Հարցնող Պայմանավորվող կողմը հոգում է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց քաղաքացիությունը որոշելու հետ կապված ծախսերը:

Հոդված 9 Իրականացման կարգը

1. Սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծանուցման ժամանակ Կողմերը պետք է՝
 - ա) հաղորդեն միմյանց սույն Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու մարմինների մասին և նրանց հասցեները,
 - բ) ապահովեն հետընդունման ու տարանցումն իրականացնելու համար նախատեսված ելքի-մուտքի կետերի ցուցակը,
 - գ) փոխանակեն սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերի և 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրինական կարգավիճակին վերաբերող փաստաթղթերի նմուշ-օրինակները:
2. Պայմանավորվող կողմերը անհապաղ կհաղորդեն միմյանց լիազորված մարմինների, նրանց հասցեների և ելքի ու մուտքի կետերի փոփոխությունների մասին: Նոր փաստաթղթի ցանկացած ներմուծության կամ սույն Համաձայնագրում նշված փաստաթղթերի փոփոխման դեպքում Պայմանավորվող կողմերը պետք է անհապաղ ծանուցեն միմյանց, ինչպես նաև տրամադրեն նոր փաստաթղթերի նմուշ-օրինակները:

Հոդված 10 Արդյունավետ համագործակցության սկզբունքները

1. Երկու Պայմանավորվող կողմերը պարտավորվում են աջակցել միմյանց սույն Համաձայնագիրն իրագործելու և մեկնաբանելու հարցում: Նրանք պետք է կանոնավոր կերպով տեղեկացնեն միմյանց իմիգրացիոն պահանջների մասին: Համաձայնագրի մեկնաբանման, կիրառման կամ իրագործման ժամանակ ծագող ցանկացած վեճ պետք է լուծվի Պայմանավորվող կողմերի լիազորված մարմինների միջև՝ խորհրդակցության, տեսակետների փոխանակման միջոցով՝ գրավոր կամ բանավոր:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է պահանջել, որ Պայմանավորվող կողմերի փորձագետները հանդիպեն Համաձայնագրի իրականացման դիմումի և կարգի հետ կապված որոշ հիմնախնդիրների որոշման համար:

Հոդված 11 Այլ պարտավորություններ

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Պայմանավորվող կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունները, մասնավորապես, այն պարտավորությունները, որոնք ամրագրված են.

ա) 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված՝ «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայում և 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված՝ «Մարդու իրավունքների մասին» եվրոպական կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում, որոնք ուժի մեջ են Պայմանավորվող կողմերի համար,

բ) 1950թ. հուլիսի 28-ի՝ «Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» Ժնևի կոնվենցիայում և 1967թ. հունվարի 31-ին ընդունված՝ «Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» արձանագրությունում,

գ) հանձնման մասին միջազգային համաձայնագրերում:

Հոդված 12

Կասեցում

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն կասեցնել սույն Համաձայնագրի դրույթները՝ ելնելով հասարակական կարգի, առողջապահության կամ ազգային անվտանգության պահպանման նկատառումներից: Այս դրույթները չպետք է կիրառվեն սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի համար:
2. Կասեցման կամ դադարեցման մասին պետք է անմիջապես գրավոր ծանուցում ուղարկվի մյուս Պայմանավորվող կողմին: Կասեցումը կամ դադարեցումը ուժի մեջ են մտնում ծանուցումը ստանալուց մեկ օր հետո:

Հոդված 13

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումը ստանալուց երեսուն օր հետո, որով Պայմանավորվող կողմերը ծանուցում են միմյանց Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:
2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելուց հետո: Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը ծանուցումը ստանալու օրվանից երեսուն օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2003 թվականի սեպտեմբերի 15-ին, երկու բնօրինակով, հայերեն, լիտվերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի մայիսի 22-ից:**